ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ձեռնարկ մանկավարժների համար

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ մանկավարժների համար

Երևան - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների հետ իրականացվող աշխատանքների մեթոդական խորհուրդներ: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար / Թադևոսյան Է. Ռ., Ազատյան Թ. Յու.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 48 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա. Մնացականյան

Գրախոսներ՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ.Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թադևոսյան Հ.Վ.

Հեղինակներ՝
Թադևոսյան Էմիլյա Ռադիկի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ազատյան Թերեզա Յուրիի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խմբագիր՝ Սարգսյան Հ.Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ.Գ.,Դավթյան Հ.Լ.

Սույն ձեռնարկի նպատակն է աջակցել հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին՝ կրթության դժվարություններ ունեցող երեխաների հաղորդակցման կարողությունների, ինքնուրույնության, դժվարությունները հաղթահարելու ունակությունների, ուսուցման ու զարգացման դժվարությունների հաղթահարման գործընթացում:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

«ԲԱԶԱՅԻՆ ԽԹԱՆՈՒՄ» ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ 8

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԲԱԶԱՅԻՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին նկատվում է զարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների թվի աճ: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2021թ. փետրվարի տվյալների՝ աշխարհում շուրջ 240 միլիոն երեխա ունի հաշմանդամություն: 2-4 տարեկան երեխաների 1%-ը և 5-17 տարեկան երեխաների 6%-ն աշխարհում ունեն մեկից ավելի ֆունկցիոնալ խանգարում (Ветрова, Ветров, 2022): Այս երեխաները ներառվում են կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների խմբում:

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների մի մասն ունի մտավոր զարգացման ծանր կամ խորը խանգարում, որը հաճախ զուգակցված է լինում տեսողության, լսողության, հենաշարժական համակարգի, աուտիստիկ սպեկտրի խանգարումներով: Որոշ երեխաներ կարող են ունենալ նաև հոգեկան և սոմատիկ հիվանդություններ: Ներկայացնենք նրանց՝ կրթական գործընթացի կազմակերպման առումով առավել կարևոր հոգեբանական առանձնահատկությունները: Այս երեխաներին բնորոշ է խոսքի բոլոր բաղադրիչների խորը թերզարգացումը կամ խոսքի բացակայությունը: Առարկայական գործունեությունը չի ձևավորվում, ինչը հանգեցնում է զգայական փորձի խիստ պակասի, որը, ինչպես հայտնի է, երեխայի մտավոր զարգացման հիմքն է: Մտածողությունն անկանոն է, պատկերացումները և հասկացությունները համակարգված չեն, չունեն իմաստային կապեր, երեխաները դժվարանում են ընդհանրացումներ կատարել: Առաջադրանքների

կատարումն իրականացվում է փորձելու և սխալվելու մեթոդով: Ուսուցման բոլոր փուլերում ինքնաքննադատությունը ցածր մակարդակի վրա է:

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների հոգեկան զարգացմանը նպաստող հիմնական պայմանը նրանց ինքնուրույն գործունեությունն է և մեծահասակի հետ հաղորդակցումը: Նրանց ուսուցումը պետք է ունենա գործնական ուղղվածություն (առարկայական, խաղային, հաղորդակցական, կառուցողական, կերպարվեստային, աշխատանքային գործունեություն) և ապահովի շրջակա աշխարհի մասին գիտելիքների և կարողությունների ձեռքբերում, դրանց կիրառում և ամրապնդում, ինչպես նաև նպաստի երեխաների սոցիալական փորձի ձևավորմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների կյանքում առկա են բազմաթիվ սահմանափակումներ: Նրանք դժվարանում են ինքնուրույն, ազատ տեղաշարժվել, բավարարել անձնական կարիքները, ընկալել և մշակել ինֆորմացիան, ձեռք բերել գործունեության փորձ, ընդօրինակել սոցիալական վարքագիծը և ձևավորել սոցիալական փոխհարաբերություններ:

Այս դեպքում բնորոշ է կարիքների փոխհատուցման հնարավորությունների խիստ սահմանափակում, որի պատճառով նրանք դժվարանում են կողմնորոշվել շրջապատող իրականության մեջ, չեն ընկալում սեփական անձը, այլ մարդկանց և շրջապատող աշխարհը (Бондаренко, 2016):

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող

երեխաների հետ իրականացվող աշխատանքի գլխավոր նպատակը երեխաների նախապատրաստումն է ինքնուրույն, անկախ, արժանապատիվ կյանքին՝ նպաստելով նրանց ինքնավստահության ձևավորմանը և հասարակական կյանքին ակտիվ մասնակցությանը: «Ինքնուրույն կյանք» հասկացության ներքո նկատի է առնվում կենսագործունեության հիմնական ոլորտներում (շարժում, տեղաշարժ, ինքնասպասարկում, կենցաղ, հաղորդակցում, սոցիալ-հուզական փոխազդեցություն, ճանաչում, աշխատանք, հանգիստ) այլ մարդկանցից նրանց մշտական կախվածության բացառումը: Այս երեխաների հետ իրականացվող աշխատանքներն ուղղված են երեխայի ունեցած դժվարությունների հաղթահարմանը, դրանցից բխող սահմանափակումների կանխարգելմանը և նոր կարողությունների ձևավորմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների համար պետք է ապահովել այնպիսի կրթական միջավայր, որը բնութագրվում է մատչելիությամբ, երեխաների կյանքին և կրթական կարիքներին հարմարեցվածությամբ և զարգացնող բնույթով: Այդպիսի կրթական միջավայրը ստեղծում է համապատասխան պայմաններ, որոնք հեշտացնում են շրջապատող աշխարհից եկող տեղեկատվության ընկալումն ու իմաստավորումը, տեղաշարժն ու տարածական կողմնորոշումը, հաղորդակցումը:

Այս երեխաների շարժողականության զարգացման և ճանաչողական, կենցաղային, աշխատանքային, սոցիալ-հաղորդակցական կարողությունների ձևավորման անհրաժեշտ նախապայմանը սեփական մարմնի ընկալումը և գիտակցումն է: Երեխան որքան շատ փորձ է կուտակում այս ոլորտում, այնքան ակտիվ է զարգանում նրա վերաբերմունքն իր և այլ մարդկանց, ինչպես նաև շրջապատող առարկայական և

սոցիալական աշխարհի նկատմամբ: Սեփական մարմինն ընկալելու և գիտակցելու կարողության զարգացման հիմնական մեթոդը «բազային խթանում» մեթոդն է: Այն մանկավարժական համալիր ներազդեցության մեթոդ է՝ ինտենսիվ գրգիռներով, որոնց նպատակն է երեխային օգնել գիտակցել սեփական մարմինը և հասկանալ կյանքի այն կարևոր իրավիճակները, որոնք կապված են անձնական կարիքների բավարարման հետ (Хомутская, 2022):

«ԲԱԶԱՅԻՆ ԽԹԱՆՈՒՄ» ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների կենսագործունեության սահմանափակումների և դրանցից բխող կրթական կարիքների սահմանումն անհատական է: Նրանց կրթական կարիքների բավարարումն իրականացվում է ինչպես աջակցող մասնագետների (ուսուցիչ, դաստիարակ, հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, բժիշկ և այլն), այնպես էլ երեխայի ընտանիքի հետ իրականացվող աշխատանքի և միջավայրային համապատասխան հարմարեցումների ապահովման ճանապարհով:

Այս երեխաների կրթական կարիքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- սեփական անձի գիտակցում,
- այլ անձանց գիտակցում,
- շրջապատող առարկայական աշխարհի գիտակցում,
- շրջապատող սոցիալական աշխարհի գիտակցում:

Կրթության առանձնահատուկ պայմանների եվ մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա.

- ուսուցման սոցիալ-գործնական ուղղվածություն,

- տարբերակված և անհատական մոտեցման սկզբունք,
- գործունեության սկզբունք,
- պոլիսենսոր (բազմազգայական) ուսուցման սկզբունք,
- հաղորդակցական ուղղվածության սկզբունք:

Աշխատանքներն իրականացվում են հետևյալ ուղղություններով.

- ֆիզիկական զարգացում,
- հաղորդակցման և խոսքի զարգացում,
- ինքնասպասարկման, կենցաղային և աշխատանքային կարողությունների զարգացում,
- խաղային և արգասաբեր գործունեության զարգացում,
- ճանաչողական (զգայական) զարգացում,
- սոցիալ-հուզական զարգացում:

Վերոնշյալ ուղղություններով իրականացվող աշխատանքները վերաբերում են երեխայի կենսագործունեության բոլոր ոլորտներին և թույլ են տալիս ձևավորել հիմնական կենսական կարողունակությունները:

Սեփական մարմնի և դրանից բխող՝ սեփական «Ես»-ի ընկալումը կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների բազային կրթական պահանջմունքն է, որի համար անհրաժեշտ է ձևավորել հետևյալ կարողությունները.

- ✓ սեփական մարմնի սահմանների ընկալում և գիտակցում,
- ✓ տարածության մեջ մարմի դիրքի ընկալում և հավասարակշռության պահպանում,

- ✓ մարմնի առանձին մասերի և դրանց գործառույթների ընկալում և տարբերակում:

Սեփական մարմինն ընկալելու և գիտակցելու կարողության զարգացման նպատակով կիրառվող հիմնական մեթոդներից է «բազային խթանում» մեթոդը:

«Բազային խթանում» (“Базальная стимуляция”, “Basal Stimulation”) մեթոդը մշակվել է գերմանացի հատուկ մանկավարժ Ա. Ֆրելիխի կողմից 1970-ական թվականներին: Մեթոդի հիմքում այն գաղափարն է, որ շարժումը, ընկալումը և հաղորդակցումը սերտորեն փոխկապակցված են: Արտաքին աշխարհի ընկալումը բարդ և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների կողմից խիստ սահմանափակ է և հիմնականում հիմնվում է ֆիզիկական շփման վրա, որի միջոցով էլ արտահայտվում են հույզերը և անհանգստությունները: Բազային խթանումը թույլ է տալիս փոխհատուցել երեխայի փորձի բացակայությունը և շարժվելու անհնարինությունը: Այն հնարավորություն է տալիս երեխային ընկալել իրեն որպես սոցիալական միջավայրի մի մասնիկ և շփվել շրջապատող մարդկանց հետ (Бондаренко, 2016):

Բազային խթանումն օգնում է գործի դնել, ակտիվացնել երեխայի զգայարանները, ընկալումը, շրջակա աշխարհը հագեցնել հասանելի բովանդակությամբ և երեխային հնարավորություն տալ պասիվ կերպով վերապրել և ձեռք բերել տարբեր կենսափորձեր: Բազային խթանումը ամենատարրական մակարդակի ուսուցման մեթոդ է այնպիսի դեպքերում, երբ երեխայի համար այլ ճանապարհով հնարավոր չէ ձևավորել արտաքին աշխարհից եկող գրգիռներն ընկալելու կենսափորձ: «Բազային» հասկացության ներքո նկատի է առնվում, որ գրգռիչները շատ պարզ են և խիստ սահմանափակ. շոշափողական (հպվել, բռնել), հավասարակշռության (մարմնի առանձին հատվածների

թեքումներ, ճոճում, մարմնի բարձրացում և իջեցում, որոշ շարժումների արագացում և դանդաղեցում) և վիբրացիոն (տատանում, սեղմում) (Хомутская, 2022):

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաները ոչ միշտ են կարողանում արտաքին աշխարհից ինքնուրույն ձեռք բերել օգտակար, բազմազան փորձ: Այդ իսկ պատճառով, որպեսզի նրանց թուլացած զգայարաններն արձագանքեն գրգիռներին, պահանջվում է ավելի ուժեղ և հաճախակի կրկնվող խթանում և, միաժամանակ, այլ ներազդեցությունների բացառում:

Խթանումը տեղի է ունենում պասիվ գրգռիչների միջոցով, որոնց քանակը, տեսակը և տևողությունը որոշում է մանկավարժը՝ ելնելով երեխայի վիճակից և անձնական նախապատվություններից:

Խթանման պարապմունքները չպետք է անցկացվեն մեխանիկական ձևով՝ որպես «գրգռող թերապիա» (Է. Ֆիշեր): Ցանկալի է բազային խթանումն իրականացնել երեխայի խնամքի ժամանակ, որի ընթացքում առաջարկվող գրգռիչները նրա կողմից ընկալվում են որպես նպատակային և իմաստավորված ազդակներ: Երեխայի հետ կատարվող բոլոր գործողությունները պետք է ուղեկցվեն հուզական իմաստային մեկնաբանություններով՝ կանխավ դրանց մասին նախազգուշացնելով: Շատ կարևոր է խթանման ընթացքում հետևել երեխային՝ առանձնացնելով այն գրգիռները, հնարները և վարժությունները, որոնք նրա մեջ դրական հույզեր են արթնացնում: Երեխային անհրաժեշտ է հարցնել իր զգայությունների մասին և անվանել դրանք: Կարելի է մի փոքր դանդաղեցնել այդ վարժությունների տեմպը՝ երեխայի ակտիվությունը խթանելու նպատակով:

Բազային խթանման հիմնական նպատակն է սեփական մարմինն ընկալելու միջոցով երեխային հասկացնել, որ ինքն ի վիճակի է ինքնուրույն ներգործել շրջակա աշխարհի վրա:

Բազային ներազդման գործընթացում խթանվում են ընկալման հետևյալ ոլորտները՝ սոմատիկ (մարմնական), վեստիբուլյար (հավասարակշռության), վիբրացիոն և օրալային (բերանային):

Սոմատիկ (մարմնական) բազային խթանումը մարմնի զգայունակության զարգացումն է հպումների միջոցով: Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների համար սոմատիկ խթանումը զարգացման սակավաթիվ միջոցներից մեկն է: Մանկավարժն իր ձեռքերով ներազդելով երեխայի մարմնի շոշափողական և մկանահոդային զգայունակության վրա՝ նրա մեջ ձևավորում է պատկերացում սեփական մարմնի սահմանների մասին: Շատ երեխաներ բացասական են արձագանքում հպումներին: Այս երեխաները մարմնական շփման կարիք ունեն, սակայն պետք է խստագույնս պահպանել մարմնական խթանման որոշակի կանոններ: Հպումները պետք է լինեն ինքնավստահ, չընդհատվող, կոնտրաստային և զույգ օրգանների դեպքում՝ համաչափ: Դրանք ամեն անգամ կատարվում են նույն հաջորդականությամբ և ուղղություններով, որպեսզի չլինեն անսպասելի և երեխային հնարավորություն տան կողմնորոշվել տվյալ իրավիճակում: Խորհուրդ է տրվում մարմնական խթանումն իրականացնել հետևյալ հաջորդականությամբ.

ա) իրան

բ) վերջույթներ (ձեռքեր, ոտքեր)

գ) դեմք:

Հպումները սկսվում են իրանից՝ ուսագոտուց դեպի գոտկային հատված, ապա անցնում են վերջույթներին: Ձեռքերի խթանումը կատարվում է դաստակներից դեպի ուսեր: Ոտքերի հպումները կատարվում են վերևից ներքև՝ ազդրերից դեպի ոտնաթաթեր: Դեմքի հպումներն իրականացվում են ներսից դեպի դուրս սկզբունքով: Սկզբում հպումները կատարվում են բերանից հեռու հատվածներում, ապա աստիճանաբար մոտենում են շուրթերին և բերանին:

Հպումների ժամանակ մանկավարժի ձեռքերը մեղմ և ազատ սահում են մարմնի վրայով: Հպումները կատարվում են դանդաղ և ռիթմիկ (1 րոպեի ընթացքում իրականացվում է մոտավորապես 24-26 հպում):

Հարթ և ընդարձակ մակերեսով հատվածներում (իրան, որովայն, կրծքավանդակ) հպումներն իրականացվում են թուլացած դաստակներով՝ մատները բացված և կիսածալված: Պետք է խուսափել ողնաշարի հատվածում սեղմումներից: Վերին և ստորին վերջույթների դեպքում կիրառվում են հպումներ «բռնելով»: Իրականացվում են բռնումներ թուլացրած դաստակով, ընդ որում, բութ մատը տարվում է դեպի կողք, իսկ մյուս մատները լինում են ծալված: Մանկավարժի ձեռքերը պետք է լինեն խստագույնս մաքուր, ոչ թաց, փափուկ, տաք, կարճ կտրած եղունգներով: Ժամացույցը, ապարանջանը, մատանին և այլ պարագաները, որոնք կարող են երեխային անհանգստություն պատճառել, սոմատիկ խթանման ժամանակ պետք է հանել: Հագուստը պետք է լինի հարմարավետ, շարժումները չսահմանափակող, ձեռքերը պետք է բաց լինեն մինչև արմունկները:

Մարմնական խթանման համար կարելի է կիրառել հետևյալ օժանդակ պարագաները՝ սպունգ, մերսման ձեռնոցներ, որոնք կարող են պատրաստված լինել տարբեր նյութերից՝ բրդից, կաշվից, տարբեր գործվածքներից թաշկինակներ, կտորներ

(բամբակյա, մետաքսյա, թավշյա), սրբիչներ, բարձիկներ, որոնք լցված են տարբեր նյութերով, փափուկ խաղալիքներ, վարսահարդարիչ:

Սոմատիկ խթանման տևողությունը 5-8 րոպեից մինչև 30 րոպե է՝ կախված երեխայի տարիքից և այն հանգամանքից, թե մարմնի քանի հատված է ներառված խթանման գործընթացում: Մարմնական խթանումը պետք է ընդգրկել բարդ և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների խնամքի գործընթացում: Այն ստեղծում է ավելի ջերմ և վստահելի շփման պայմաններ, երբ իրականացվում է հիգիենիկ գործողությունների, կերակրման, հագնվելու գործընթացում և չի վերածվում մեխանիկական վարժության:

Վեստիբուլյար (հավասարակշռության) բազային խթանումը զարգացնում է մարմնի հավասարակշռության կարողությունը ինչպես հանգստի, այնպես էլ 3 հիմնական ուղղություններով շարժվելու ժամանակ.

1) մարմնի հորիզոնական շարժումներ (աջ, ձախ),
2) մարմնի ուղղահայաց շարժումներ (վերև, ներքև),
3) մարմնի շարժումներ դեպի առաջ և դեպի հետ:

Վեստիբուլյար խթանումն իրականացվում է ճոճումների և մարմնի կամ դրա առանձին հատվածների թեքումների միջոցով: Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաները ոչ միշտ են համարժեք արձագանքում տարածության մեջ մարմնի դիրքի փոփոխություններին: Չափազանց արագ ճոճելը, թեքումները կամ այլ շարժումները կարող են հանգեցնել գլխապտույտի, սրտխառնոցի, գերգրգռման կամ անհանգստության առաջացման: Այդ իսկ պատճառով

պետք է խուսափել պտտող շարժումներից, օգտագործել հենարաններ, երբ փոխվում է մարմնի դիրքը տարածության մեջ, կայունացնել գլխի դիրքը:

Տարածության մեջ մարմնի դիրքի ընկալման և հավասարակշռությունը պահելու կարողության ձևավորմանը նպաստում է հետևյալ վարժությունների կատարումը. գլուխը դանդաղ թեքել դեպի կողք և առաջ, երեխային ճոճել կողքի պառկած դիրքում (էմբրիոնի դիրք), իրանը թեքել դեպի կողք, ձեռքերը և ոտքերը թափահարել, մարմինը ուղղահայաց դիրքի բերել, երեխային նստեցնել գիրկը և ճոճել, ճոճել մարզումների գնդակի, ճոճանակի վրա և ցանցաճոճի մեջ: Վերոնշյալ վարժություններն իրականացնելիս մանկավարժը պետք է բռնի երեխային: Վեստիբուլյար խթանման տևողությունն անհատական է, սակայն պետք է հետևել, որ պարապմունքի մեկ երրորդը հատկացվի երեխայի հանգստին:

Վեստիբուլյար խթանման աշխատանքում առավել կիրառելի պարագաներ են գնդակները, օղակները, անիվները, ճոճանակը, կախովի կտորե ճոճքը, բատուտը, զսպանակներով ներքնակները, բարձերը:

Վիբրացիոն բազային խթանումը զարգացնում է մարմնի շարժման հետևանքով առաջացող օդի տատանումների հանդեպ երեխայի զգայունակությունը: Զգայության այս տեսակը կարելի է անվանել «կոնտակտային լսողություն»: Վիբրացիոն խթանման ժամանակ երեխայի մարմնի (կամ դրա հատվածի) վրա ազդում են այնպիսի սարքերի միջոցով, որոնք առաջացնում են ցնցումներ. վիբրացիոն (թրթռացող) խաղալիքներ, բարձեր, բազկաթոռներ, էլեկտրական սարքեր (ատամների էլեկտրական խոզանակ, մերսման էլեկտրական սարքեր), կամերտոն, ռեզոնանսային մեծ մակերևույթ ունեցող երաժշտական գործիքներ և այլն: Վիբրացիոն շարժումների օգնությամբ երեխան տեղեկություն է ստանում կմախքի կառուցվածքի մասին: Վիբրացիոն խթանումը

սկսվում է իրանից հեռու գտնվող հատվածներից (օրինակ՝ ոտքի մատների ֆալանգներից): Խթանող սարքը պետք է հպվի կոնկրետ ոսկորին: Վիբրացիոն խթանումը կիրառելի է ոսկրային համակարգի հետևյալ բաժինների համար՝ մատների ֆալանգներ, դաստակի, նախաբազկի ոսկորներ, արմունկոսկր և ուսագոտու ոսկորներ, ոտքերի մատների ֆալանգներ, ոտնաթաթի, սրունքի ոսկորներ, ազդրոսկր, կողոսկրեր: Ողնաշարի և գանգի ոսկորների վրա վիբրացիոն ազդեցությունն արգելվում է:

Վիբրացիոն խթանումն իրականացվում է կոշտ մակերևույթի վրա: Երեխան պետք է պառկած լինի մեջքի վրա: Խորհուրդ է տրվում կիրառել մեխանիկական վիբրացիա, որի տատանման հաճախականությունը 10-ից մինչև 200Հց է: Վիբրացիոն խթանման անհրաժեշտ չափաբաժինը խիստ անհատական է: Գործողության իրականացման ժամանակ ուժգնությունը պետք է վերահսկվի՝ հիմնվելով երեխայի զգայությունների վրա: Միևնույն հաճախականության տևական լինելու դեպքում երեխան կարող է դրան ընտելանալ: Իսկ պրոցեդուրայի ժամանակի երկարաձգումը կարող է հոգնեցնել նրան: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում կատարել հաճախականության փոփոխություն: Տևողությունը կարող է կազմել 5-15 րոպե: Դրա աստիճանական ավելացման դեպքում երեխայի օրգանիզմը հարմարվում է վիբրացիոն ազդեցություններին: Եթե խթանվում են մի քանի հատվածներ, ապա ընդհանուր ազդեցության տևողությունը չպետք է գերազանցի 12-15 րոպեն, քանի որ երկարատև վիբրացիան արգելակում է նյարդային համակարգի գործառույթները:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԲԱՁԱՅԻՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կիրառել վարսահարդարիչ:
- Քսուքը տարածել մաշկի վրա:
- Հագնել-հանել գլխարկներ, ձեռնոցներ, գուլպաներ:
- Մերսման համար նախատեսված գնդակով ուրվագծել երեխայի մարմինը:
- Թղթի վրա ուրվագծել մարմինը, ձեռքի ափը, ոտնաթաթը:
- Տարբեր գործվածքների կտորներով տրորել մարմինը:
- Տակտիլային թաթիկներով «նկարել» մեջքի վրա:
- Շոյել մարմնի տարբեր հատվածները և անվանել դրանք:
- Թակել, թեթևակի հարվածել մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում՝ նաև երեխայի ձեռքերով:
- Երեխայի ձեռքերով շոշափել իր մարմինը:
- Երեխայի մարմինը փաթաթել ժապավեններով:
- Հպվել մարմնին և սեղմել այն տարբեր ձև և ջերմաստիճան ունեցող առարկաներով:
- Մարմինը ցողել տարբեր ջերմաստիճանի հեղուկներով:
- Երեխային հնարավորություն տալ հպվել տարբեր ջերմաստիճանի խաղալիքների:

- Երեխայի մարմնին լցնել բրինձ, ոլոռ և այլն:
- Խիտ կտորով փաթաթել երեխային:
- Նրան հնարավորություն տալ լսել իր ձայնը ստետոսկոպի միջոցով:
- Երեխային հնարավորություն տալ որոշակի մակերևույթի վրա մածուկ կամ սափրվելու փրփուր քսել:
- Նրա մատներով գունավոր մատնահետքեր թողնել թղթի վրա:
- Երեխայի ձեռքի մեջ դնել իրարից խիստ տարբերվող ձև, քաշ և մակերևույթ ունեցող առարկաներ:
- Երեխայի ձեռքով վերցնել և պահել գդալ, ատամի խոզանակ, օճառ, սանր, վրձին, մատիտ:
- Երեխայի ձեռքով բռնել վիբրացիոն խաղալիք:
- Երեխայի մեկ կամ երկու ձեռքերով տարբեր գործողություններ (մանիպուլյացիաներ) կատարել որոշակի առարկաներով:
- Երեխայի ձեռքերով կամ ոտքերով հրել տարբեր առարկաներ:
- Երեխային հնարավորություն տալ դիտել իր լուսանկարները և նայել հայելու մեջ:
- Երեխայի մարմնի տարբեր հատվածներով կատարել պասիվ շարժումներ:
- Երեխային հնարավորություն տալ սողալ, շարժվել փափուկ, կոշտ, խորդուբորդ, տաք, թաց մակերևույթի (գորգի) վրայով:
- Երեխային ճոճել մեծ գնդակի վրա:

Բազային խթանումը կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս գիտակցել սեփական մարմինը կյանքի համար կարևոր տարրական իրավիճակներում: Այն

իրականացվում է երեխայի խնամքի գործընթացում և հիմնվում է նրա անձնական պահանջմունքների բավարարման վրա: Փոխգործունեության այս մեթոդը թույլ է տալիս երեխայի հետ հաստատել շատ մտերմիկ և վստահելի փոխհարաբերություններ (Хомутская, 2022):

Բազային խթանումը հնարավորություն է տալիս նվազեցնել երեխայի տագնապները և բարդույթները և նրա մեջ ձևավորում է շրջակա աշխարհի ավելի հասկանալի պատկերացում: Բազային խթանումը ոչ միայն մեթոդ է, այլ սկզբունք, որի համաձայն պետք է կազմակերպել երեխայի խնամքը և կենսակերպը՝ բարձրացնելով նրա կյանքի որակը (Бондаренко, 2016):

Ներկայացնենք բազային խթանման մեթոդի հիման վրա իրականացված պարապմունքի **պլան-կոնսպեկտի օրինակ**:

Թեման՝ «Մարմնի մասեր»

Նպատակը՝ Սեփական մարմնի սահմանների ընկալում և գիտակցում:

Խնդիրները.

- երեխային սովորեցնել համարժեք արձագանքել անվտանգ տակտիլային գրգիռներին,
- տարբեր տակտիլային գրգռիչների օգնությամբ խթանել երեխայի և մանկավարժի երկարատև հուզական փոխազդեցությունը,
- երեխայի մեջ ձևավորել հետաքրքրություն սեփական կողմնորոշման նկատմամբ:

Անհրաժեշտ նյութեր՝ Մերսման գնդակ, մանկական քսուք, ծավարեղենով լցված չոր ավազան, վարսահարդարիչ, ձեռնոցներ:

Ընթացքը՝

Ողջունում. Երեխաները բռնում են միմյանց ձեռքերը և պտտվելով միասին երգում.

Առավոտն սկսվել է,
Մենք հանդիպել ենք,
Եվ ուրախացել ենք:
Ո՞վ է այստեղ,
Ո՞վ է եկել:
Նարեն է այստեղ,
Նարեն է եկել:
Նա-րե, Նա-րե (մանկավարժը երեխայի ձեռքով հպվում է նրա կրծքավանդակին):

1. **Զգայական ռիթմիկ խաղ «Երեխայի մարմնի ուրվագծում մերսման գնդակի միջոցով»:**

   Երեխան պառկած է գորգի վրա:
   Վազեց ոզնին ճանապարհով,
   Նարեի ոտքի վրայով:
   Մեջքի վրա բարձրացավ,
   Ժպտաց և ուրախացավ:
   Ձեռքի վրա ցատկոտեց,
   Մեկ է՝ էլի չհոգնեց:
   Գլխի վրա բարձրացավ,

Պտտվեց, ներքև իջավ:
Գնաց, հասավ մյուս ձեռքին,
«Բարև՛»,- ասաց մատներին:
Մեջքին կրկին պտտվեց,
Մյուս ոտքի մոտ գլորվեց,
Արագ-արագ եկավ, գնաց
Ու ինքն իրեն այսպես ասաց.
-Այսօր ես լա՛վ մարզվեցի,
Բա՛վ է, արդեն հոգնեցի (Бондаренко, 2016, Թարգմանությունը՝ Է.Թադևոսյանի):

Մանկավարժը սկզբում իր, ապա երեխայի ձեռքերով ուրվագծում է նրա մարմինը:

-Ո՞վ է սա: Սա Նարեն է: Սրանք ձեռքեր են: Ու՞մ ձեռքերն են: Նարեի ձեռքերն են:

2. Մարմնի մասերի (ձեռքերի) շոյում և անվանում, քսուքի տարածում մաշկի վրա:

Մանկավարժը շոյում է երեխայի ձեռքը՝ միաժամանակ խոսելով.

-Նարեի ձեռքերը շոյեմ,
Ձեռքերին քսուք քսեմ:
Քսուքը ոչ մի գույն չունի,
Սակայն շատ լավ բույր ունի:

3. Վարսահարդարիչի կիրառում:

-Քամին փչում է Նարեի ձեռքին,

Ի՜նչ հաճելի է, ի՜նչ հաճելի:

Հիմա փչում է մյուս ձեռքին,

Շատ հաճելի է, շատ հաճելի:

4. Մարմնի մասերի (ձեռքերի) վրա լցնել ձավարեղեն:

-Թաքցնենք ձեռքերը: Չկան ձեռքերը:

Ո՞ւր է ձեռքը: Ահա՛ ձեռքը, Նարեի՛ ձեռքը:

Ո՞ւր է մյուս ձեռքը: Ահա՛ մյուս ձեռքը:

5. Հագնում ենք ձեռնոցներ:

-Ձեռքերը թաքցնենք տնակում: Ո՞ւր է ձեռքը: Չկա ձեռքը:

Նույնը կատարվում է մյուս ձեռքով:

-Հանում ենք ձեռնոցը: Ահա ձեռքը:

6. Զգայական խաղ «Ո՞ւր են ձեռքերը»

Ձեռքերը թաքցնում ենք մեջքի հետևում:

- Ո՞ւր են ձեռքերը, չկան ձեռքերը:

Ձեռքերը բերում ենք առաջ:

-Ահա՛ ձեռքերը, Նարեի ձեռքերը:

7. Երեխայի ձեռքերի ուրվագծում:

Ամփոփում: Երեխայի ձեռքով ցտեսություն ենք անում.

-Հաջո՜ղ, հաջո՜ղ… (Бондаренко, 2016):

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երեխաների ուսուցումը պետք է կատարվի անհատական ուսումնական պլանի (այսուհետ՝ ԱՈՒՊ) հիման վրա: Համապատասխան բժշկական եզրակացության դեպքում այս երեխաների ուսուցումը կարող է իրականացվել նաև տնային պայմաններում ըստ ԱՈՒՊ-ի: Մտավոր զարգացման խորը խանգարում ունեցող երեխաներն ի վիճակի են ընկալել շրջապատող իրականությունը, սակայն ոչ այն եղանակներով, ինչպես մյուս երեխաները: Համապատասխան աջակցության դեպքում այս երեխաներն ի վիճակի են յուրացնել որոշ սոցիալ-կենցաղային հմտություններ և տարրական ուսումնական գործունեություն իրականացնել:

Կրթության պլանավորման ժամանակ պետք է ընտրել ուսուցման այնպիսի բովանդակություն, որը կնպաստի երեխաների առարկայական, խաղային, ուսումնական գործունեության, ինչպես նաև կենսագործունեության տարրական հմտությունների և հաղորդակցման միջոցների յուրացմանը: Ուսուցման հիմնական եղանակը դասերը և պարապմունքներն են: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ արդյունքներն արագ չեն ստացվում: Ուստի ուսուցիչները պետք է զինվեն համբերությամբ, համարժեքորեն գնահատեն սեփական ջանքերը և ճիշտ վերլուծեն սեփական գործունեությունը: ԱՈՒՊ-ի կազմման ժամանակ նախ պետք է որոշել, թե գործունեության որ տեսակներն են ձևավորված և հասանելի երեխային: Սովորողի զարգացման մակարդակի բացահայտման ժամանակ գնահատվում է, թե ինչ գործողություններ է ի վիճակի

կատարել երեխան: Առանձնացնում են գործունեության իրականացման հետևյալ մակարդակները.

- մանկավարժի հետ համատեղ գործողություններ,
- գործունեություն ըստ ընդօրինակման,
- գործունեություն առարկայի վրա երեխայի ուշադրությունը հրավիրելու միջոցով,
- սովորողի ինքնուրույն գործունեություն,
- սեփական սխալներն ուղղելու կարողություն:

Տարրական մաթեմատիկական պատկերացումներ

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը պետք է ունենա գործնական ուղղվածություն: Գործնական նյութերն ընտրվում են այնպես, որ դրանց բարդության մակարդակը համապատասխան լինի երեխայի զարգացման առանձնահատկություններին: Պարապմունքների ժամանակ ուսուցիչը կարող է կիրառել խաղային գործունեություն (սյուժետադերային, դիդակտիկ խաղեր, խաղ-բեմականացումներ, շարժախաղեր), ինչպես նաև տարրական աշխատանքային, կառուցողական, կերպարվեստային գործունեություն (աշխատանք ծեփանյութերով, նկարչություն, ապլիկցիա):

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման գործընթացում կիրառվում են հետևյալ մեթոդները և հնարները՝

- մեծահասակի հետ համատեղ գործողություններ,
- ուսուցչի գործողությունների ընդօրինակում,
- գործողություն ըստ նմուշի,
- գործողություն ըստ բառային հրահանգի,

- աշխատանքներ կաղապարով՝ առարկաների ձևի, չափի և քանակի մասին պատկերացումների ամրապնդման համար,
- տարրական հաշվողական գործողություններ բազմաթիվ առարկաներով՝ հիմնվելով լսողական, շոշափողական և տեսողական ընկալման վրա,
- առարկաների, թվերի, պատկերների տակտիլային և տեսողական ուսումնասիրության հիման վրա դրանց ձևի և չափի վերարտադրում պանտոմիմիկ միջոցներով (ձեռքերով ցուցադրում),
- առարկաների ձևի, չափի և քանակի նախնական դիտում, անվանում և ցուցադրում շրջապատող իրականության մեջ, խաղային գործունեության ընթացքում և ըստ նկարի,
- իրական առարկաների համադրում հարթ և ծավալային պատկերների հետ,
- ժամանակային պատկերացումների ձևավորման համար տարվա տարբեր եղանակներին բնության երևույթների, օրվա ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների դիտում զբոսանքների, էքսկուրսիաների ընթացքում,
- առարկաների խաղարկում, դրանց ֆունկցիոնալ նշանակության, հատկությունների բացահայտում՝ հետագա մաթեմատիկական գործունեության ընթացքում դրանց առավել ճշգրիտ կիրառման համար:

Ուսուցիչները պետք է նկատի ունենան, կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մակարդակը խիստ ցածր է: Ուստի ծրագիրը պետք է այնպես կազմել, որ ուսումնասիրվող նյութի ծավալի ընդլայնումը և բարդացումը տեղի

ունենա շատ դանդաղ: Ուսումնասիրվող նյութը ուսուցման բոլոր տարիների ընթացքում պետք է պարբերաբար կրկնել առարկայական և խաղային գործունեության ընթացքում:

Մայրենի լեզու (խոսք)

Ընթերցանությունը և գրավորը մտավոր գործունեության բարդ տեսակներ են: Այդ իսկ պատճառով կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների համար ծրագրում պետք է նախատեսել «Մայրենի լեզու/խոսք» բաժինը, որի հիմնական նպատակը պետք է լինի երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման կարողությունների զարգացումը: Հարկ է նշել նաև, որ կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցողների մեջ կան երեխաներ, ովքեր կարող են յուրացնել ձեռագիր կամ տպագիր տառերով բառեր կամ նախադասություններ գրելու կարողությունը: Ոմանք կարող են արտագրել կամ արտանկարել տառեր, բառեր, որը նույնպես նպաստում է հետագայում այնպիսի տառերի և բառերի ընկալման կարողության զարգացմանը, որոնք հանդիպում են առօրյայում. խանութ, հաց, պանիր, կաթ, դեղատուն և այլն: Եթե չեն ձևավորվում գրելու և կարդալու նախադրյալներ, պետք է զարգացնել հաղորդակցման գործողություններ կատարելու կարողություններ: Ընդ որում, կարևոր է երեխաներին մղել կատարելու այս կամ այն աշխատանքը և խրախուսել ցուցաբերած ջանքերի համար: Խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում հարկավոր է բազմիցս կրկնել նյութը, իսկ նոր տարրերը ներմուծել աստիճանաբար: Կախված երեխայի անհատական կարողություններից՝ ծրագրային նյութի յուրացման աշխատանքը կարելի է կատարել արագ կամ դանդաղ տեմպով:

Աղյուսակ 1-ում ներկայացված է դասի կազմակերպման օրինակ:

Աղյուսակ 1.

Մայրենի լեզվի դասի կազմակերպման օրինակ

Ընթերցանության նախապատրաստում	Հաղորդակցման զարգացում	Խոսքի և ճանաչողական գործունեության ակտիվացում	Գրաֆիկական կարողությունների զարգացում
Ուսուցչի խոսքում հնչող պարզ նախադասությունների ունկնդրում: Նախադասության մեջ նշված գործողության համատեղ կատարում: **Խաղեր.** «Հագցնում ենք տիկնիկին», «Կապիկ», «Հայելի» և այլն:	Ուսուցչի հետ հուզական կապի ձևավորում: Ուսուցիչն իր խոսքում նշում է երեխաների անունները: **Խաղեր.** «Արի՛ ինձ մոտ», «Վերցրո՛ւ գնդակը» և այլն:	Գույնի վերաբերյալ երեխայի պատկերացումների բացահայտում: Աշխատանքի եղանակներն են. -նմուշի վրա տեղադրում, -նմուշի հետ տեսողական հարաբերակցում, -ընտրություն ըստ բառային հրահանգի:	Երեխայի գրաֆիկական կարողությունների բացահայտում: Աշխատանք տարբեր նյութերով՝ կավճով, մատիտով, գրչով, ներկերով:

Ուսուցման ընթացքում շատ կարևոր է մշտապես կիրառել խաղային, զննական այնպիսի հետաքրքիր նյութեր, որոնք հասանելի են երեխաների այս խմբին: Հայտնի է, որ խոսքը շատ կարևոր դեր ունի երեխայի ճանաչողական և հուզական զարգացման մեջ և սոցիալական փոխազդեցության հիմք է հանդիսանում: Միևնույն ժամանակ, այն չի կարող լիարժեք կիրառվել բարդ և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների կողմից: Ուստի ուսուցման ընթացում պետք է կիրառել հաղորդակցման ոչ խոսքային միջոցներ, որոնցից է այլընտրանքային ընթերցանությունը, ըստ որի պետք է ձևավորել հետևյալ տրամաբանական շղթան.

1. պիկտոգրամների ընթերցանություն,
2. ընդհանրական հասկացություն,
3. ըստ պիկտոգրամների ինքնուրույն գործողություններ կատարելու հմտության ամրապնդում,
4. ինքնուրույն կողմնորոշում պիկտոգրամների համակարգում:

«Ընթերցանություն» առարկայի շրջանակներում կրթության 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաներին առաջարկվում է ուսուցանել ընթերցանության հետևյալ տարբերակները.

- մարմնի շարժումների և դիմախաղի «ընթերցում»,
- նկարների «ընթերցում»,
- աուդիոգրքերի ունկնդրում,
- տեսանյութերի «ընթերցում»,
- պիկտոգրամների «ընթերցում»,
- գլոբալ ընթերցանություն:

Ընթերցանության այսպիսի լայն ընկալումը նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալ-կենցաղային կողմնորոշման զարգացմանը:

Ներկայում ստեղծված է կոդավորված բառարան, որը կարելի է օգտագործել կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների և՛ առօրյա կյանքում, և՛ ուսումնական գործունեության ընթացքում: Դրա մեջ տրված են խորհրդանշական պատկերներ (պիկտոգրամներ), որոնց վերևում գրված են անվանումները: Բառերի պիկտոգրամները, կախված քերականական կատեգորիայից, պատկերված են տարբեր գունային ֆոներով: Խորհրդանշական պատկերը կոնկրետ է, հեշտ ճանաչելի, որպեսզի սովորողը կարողանա հեշտությամբ նույնականացնել այն իրական առարկայի կամ դրա իրական պատկերի հետ: Կոդավորված բառարանը թույլ է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողներին հաղորդակցվել և կողմնորոշվել առօրյա կյանքի տարբեր իրավիճակներում:

Հաղորդակցման ոչ խոսքային միջոցներով համակարգը նախատեսում է.

- նշանի (պիկտոգրամի) հասկացության սկզբնական ձևավորում,
- ուսումնասիրված նշանների հիման վրա ընդհանրական հասկացությունների ձևավորում,
- նշաններով ինքնուրույն գործողություններ կատարելու հմտությունների ամրապնդում,

- առաջարկվող նշանների համակարգում ինքնուրույն կողմնորոշվելու ունակություն,
- պիկտոգրամների «ընթերցում»:

Հարկ է նշել, որ կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքում չկա ունիվերսալ մոտեցում: Այդ իսկ պատճառով այս կամ այն կոդային համակարգի ընտրությունը կախված է երեխայի տարիքից և անհատական կարողություններից: Այն սովորողները, ովքեր տիրապետում են կոդային համակարգին, կարողանում են ոչ միայն «կարդալ» դրանք, այլ նաև պատասխանել կարդացածի վերաբերյալ տրված հարցերին: Պիկտոգրաֆիկ տեքստերի կազմման համար կարելի է օգտագործել նյութեր մանկական գեղարվեստական ստեղծագործություններից կամ ուսուցչի կողմից հատուկ կազմված կարճ պատմվածքներ:

Կերպարվեստային գործունեություն

Կերպարվեստը, ինչպես և խաղային, կառուցողական և աշխատանքային գործունեությունը, ունի հսկայական զարգացնող և շտկողական հնարավորություններ: Դրա նպատակասլաց կիրառումը կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքում կարող է ապահովել նրանց զգայական համակարգի, մանր շարժողականության, շարժումների հավասարակշռության և շրջակա աշխարհի ընկալման ու պատկերացումների զարգացում: Ուստի կերպարվեստային գործունեության ուսուցման առաջնային

նպատակն ուղղված է ոչ թե ուսումնական, այլ շտկողական, զարգացնող և դաստիարակչական խնդիրների լուծմանը:

Ութ տարեկանում այս երեխաների մեջ ձևավորված չէ հետաքրքրություն կերպարվեստային գործունեության հանդեպ: Նրանք չեն ցուցաբերում նկարելու, ծեփելու ցանկություն, չգիտեն, թե դրանց համար ինչ պարագաներ են անհրաժեշտ (մատիտներ, վրձիններ, ներկեր, ծեփանյութեր, կավ), և չեն կարողանում դրանք գործածել: Այսպես, օրինակ՝ մատիտով քաոսային, միատեսակ, առանց հուզական դրսևորումների գծեր են քաշում, չեն օգտագործում թղթի մակերեսը, չեն կարողանում ինքնուրույն նկարել ներկերով, գործածել վրձին, գործողությունները չունեն նպատակաուղղվածություն, խաղային նպատակ: Նրանք չեն ասոցացնում նկարները շրջապատող իրականության իրերի և երևույթների հետ:

Կերպարվեստային գործունեության ուսուցման խնդիրներն են.

1. կերպարվեստային գործունեության նկատմամբ դրական հուզական վերաբերմունքի ձևավորումը,
2. գործունեության և դրա արդյունքների նկատմամբ հետաքրքրության ձևավորումը,
3. շրջապատող իրականությունը պարզ կերպարվեստային միջոցներով (նկար, ապլիկացիա) արտացոլելու պահանջմունքի ձևավորումը,
4. ստացված պատկերներն իրական օբյեկտների, երևույթների և իրադարձությունների հետ հարաբերակցելու կարողության ձևավորումը,
5. նկարելու, ապլիկացիա պատրաստելու, ծեփելու հնարների և միջոցների ուսուցումը,

6. պատկերվող օբյեկտների հիմնական հատկանիշների և հարաբերությունների ընկալման զարգացումը,
7. շրջապատող իրականության իրերի և երևույթների մասին պատկերացումների հարստացումը, ճշտումը և ամրապնդումը,
8. մանր շարժողականության, տեսողաշարժողական հավասարակշռության, 2 ձեռքերի շարժումների հավասարակշռության կատարելագործումը,
9. սեփական և այլոց գործունեության արդյունքների հանդեպ համապատասխան վերաբերմունքի դաստիարակումը և ինքնագնահատականի նախադրյալների ձևավորումը:

Կերպարվեստային գործունեության պարապմունքները պետք է ներառեն գործունեության մի քանի տեսակներ, օրինակ՝ ծեփ և ապլիկացիա, խաղ և նկարչություն, նկարչություն և ապլիկացիա, նկարում և կառուցում: Դա թույլ է տալիս երեխայի մեջ ձևավորել հասկացություն այն մասին, որ առարկան կարող է պատկերված լինել տարբեր միջոցների օգնությամբ, հարթ և ծավալուն և, այդուհանդերձ, դա կլինի միևնույն առարկան: Կերպարվեստային գործունեությունը ներառում է նկարչությունը, ծեփակերտումը և ապլիկացիան: Յուրաքանչյուր թեմայի շուրջ աշխատանքներն իրականացվում են 3-4 դասերի ընթացքում: Հարկավոր է ուսումնական նյութն աստիճանաբար բարդացնել: Կախված երեխայի անհատական կարողություններից՝ ուսուցման տեմպը կարելի է արագացնել կամ դանդաղեցնել:

Տեխնոլոգիա

«Տեխնոլոգիա» առարկայի դասերի ընթացքում երեխան յուրացնում է տարրական սոցիալ-կենցաղային ունակություններ, սկզբում՝ ուսուցչի օգնությամբ, այնուհետև՝ ինքնուրույն: Այս գործընթացում կիրառվում են հաղորդակցման որոշ մոդելներ: Հարկ է նշել, որ ձեռքի աշխատանքի դասերի ընթացքում պատրաստված նմուշների որակը և գործնական կիրառելիությունը գործընթացի գլխավոր նպատակը չեն: Հիմնական նպատակը երեխաների զգայական զարգացումն է և զգայական փորձի հարստացումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ և չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների կողմից ծրագրային նյութի յուրացման դինամիկայի և այս սովորողների ակտուալ փորձի արձանագրման համար Հավելված 1-ում և 2-ում ներկայացված են համապատասխան քարտերի օրինակներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бгажнокова И.М., Ульянцева М.Б. - Воспитание и обучение детей и подростков с тяжелыми и множественными нарушениями развития: программно-методические материалы / И.М. Бгажнокова, М.Б. Ульянцева, С.В. Комарова и др.; под ред. И.М. Бгажноковой. – М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2007.
2. Бондаренко Н.П. - Использование метода базальной стимуляции в коррекционно-развивающей работе с детьми с тяжелыми или множественными нарушениями физического или психического развития (ТМНР) / Научно-практический журнал “Ребёнок и Общество”, 2016, №2, С. 37-44.
3. Ветрова М.А., Ветров А.О. - Дети с тяжелыми множественными нарушениями: обзор зарубежной литературы. // Современная зарубежная психология. 2022. Том 11. № 2. С. 101–112. DOI: 10.17759/jmfp.2022110209.
4. Жигорева М.В. - Дети с комплексными нарушениями в развитии: педагогическая помощь: учеб. пособие для студ. высш. учеб. зав. / М.В. Жигорева. – 2-е изд., испр. – М.: Академия, 2008.
5. Миненкова И.Н. - Использование метода базальной стимуляции в коррекционно-педагогической работе с детьми с тяжёлыми и (или) множественными нарушениями психофизического развития / И.Н. Миненкова // Обучение и воспитание детей в условиях центра коррекционно-развивающего обучения и реабилитации: учеб.-метод. пособие / С.Е. Гайдукевич и др.; науч. ред. С.Е. Гайдукевич. – Мн: УО «БГПУ им. М. Танка», 2007. Специальная педагогика / под ред. Н.М. Назаровой. – М.: Издательский центр «Академия», 2005.
6. Шипицына Л.М.: Развитие навыков общения у детей с умеренной и тяжелой умственной отсталостью. - СПб, изд. “Союз”, 2004, 335 с.

Հավելված 1

Ծրագրային նյութի յուրացման դինամիկայի վերահսկման քարտ

(Լ.Մ.Շիպիցինայի մեթոդիկայի հարմարեցված տարբերակ)

Ամսաթիվ	Գործունեության գերակշռող եղանակներ																								
	Միայն համատեղ գործունեությամբ					Մեծահասակի օգնությամբ					Մեծահասակի վերահսկմամբ					Ընտրողական վերահսկմամբ					Ինքնուրույն				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5

Թվերը համապատասխանում են ԱՈւՊ-ում ներկայացված առարկաների հերթական համարներին:

Հավելված 2

Սովորողի ակտուալ փորձի գնահատման աղյուսակ

Գործողություններ	**Գործողությունների յուրացում**	
	Դինամիկա	
Ճանաչողական	**Ուս. տարվա սկզբում**	**Ուս. տարվա վերջում**
1. ԶԳԱՅԱԿԱՆ-ՊԵՐՑԵՊՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ա) Ուշադրության կենտրոնացում օբյեկտի վրա		
բ) Հայացքի տեղափոխում մի առարկայից մյուսին		

գ) Շարժվող առարկային հետևելու կարողություն		
դ) Իր կողմից տեղափոխվող առարկային հայացքով հետևելու կարողություն		
Եզրակացություն		
2. ԶԳԱՅԱԿԱՆ-ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ա) Փայտե հուլունքների տեղափոխում լարերի վրայով (մատնային լաբիրինթոսներ)		
բ) Տափակ իրերի (էջերի) շրջում		
գ) Առարկաների դասակարգում ըստ ձևի		
դ) Պատկերների տարբերակում ըստ չափի		
ե) Գրելու համար նախատեսված առարկաների կիրառում (կավիճ, մարկեր, մատիտ, գրիչ)		
Եզրակացություն		

3. ԳՐԱՖՈՄՈՏՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ա) Մատիտը բռնելու կարողություն		
բ) Մատիտը ճիշտ պահելու կարողություն		
գ) Մատիտով տարածական շարժումներ (ուղղահայաց, հորիզոնական, թեքված, շրջանաձև)		
դ) Ծրագրով նախատեսված սիմվոլների տարբերակում (տառեր, թվեր, նշաններ)		
Եզրակացություն		
4. ՈՉ ՎԵՐԲԱԼ (ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ) ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ա) Զրուցակցի հետ տեսողական կոնտակտի հաստատում		
բ) Մեծահասակի դեմքով կողմնորոշում		
գ) Երկխոսության ժամանակ դիրքի պահպանում (նստած, կանգնած)		
դ) Ֆիզիկական և		

հաղորդակցական սահմանի պահպանում		
ե) Դիմախաղի և դեմքի արտահայտության ադեկվատություն (համապատասխանություն)		
զ) Ցանկությունները ժեստերով և դիմախաղով արտահայտելու կարողություն		
Եզրակացություն		
5. ԽՈՍՔ, ԽՈՍՔԻ ԸՆԿԱԼՈՒՄ (ԸՄԲՌՆՈՒՄ)		
1) Ըստ խոսքային հրահանգի 1 գործողության կատարում («Արի՛ այստեղ»)		
2) Ըստ խոսքային հրահանգի 2 գործողության կատարում («Արի՛ այստեղ և նայի՛ր ինձ»)		
3) Ըստ խոսքային հրահանգի 1, 2, 3 գործողության կատարում («Արի՛ այստեղ,		

նայի՛ր ինձ, նստի՛ր»)		
4) 2 առարկաներից ընտրել այն, որը պահանջվում է (անվանվում է)		
5) 3 առարկաներից ընտրել այն, որը պահանջվում է (անվանվում է)		
6) Տարբեր առարկաներից ընտրել այն, որը պահանջվում է (անվանվում է) և բերել		
7) Ցույց տալ մարմնի անվանված մասը		
8) Ցույց տալ մարմնի 2 անվանված մասերը		
9) Ցույց տալ անվանված գույնը		
10) Ցույց տալ մեծ կամ փոքր առարկան		
11) Ցույց տալ անվանված առարկան նկարի վրա		
12) Կատարել թվական պարունակող հրահանգը		

(«Ցո՛ւյց տուր, թե որտեղ կա 5 խնձոր»)		
13) Ցույց տալ զույգ առարկաները		
14) Ցույց տալ զույգ նկարները		
15) Վերցնել ավելորդ առարկան՝ ըստ գույնի, չափի, ձևի և պատրաստված նյութի		
16) Կրկնել 3-4 բառ պարունակող նախադասությունը		
17) Նշել պատմվածքի իրադարձությունները կամայական հաջորդականությամբ		
18) Նշել պատմվածքի կարևոր իրադարձությունները ճիշտ հաջորդականությամբ		
Եզրակացություն		

ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ		
1. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ա) Հագուստի տեսակների անվանումների իմացություն		
բ) Հագուստի շիտակ և թարս կողմերի տարբերակում, հագուստը ճիշտ կողմով հագնելու կարողություն		
գ) Հագուստն ինքնուրույն հանելու կարողություն		
դ) Կոշիկների տարբերակում ըստ մարմնի սխեմայի (աջ, ձախ)		
ե) Ինքնուրույն սնվելու կարողություն		
զ) Զուգարանից ինքնուրույն օգտվելու կարողություն		
է) Անձնական հիգիենայի հմտություններ		
Եզրակացություն		

2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԵՐԻ (ՍՊԱՍՔԻ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ		
-թեյնիկ -թեյ, սուրճ -կաթ -բաժակ -ափսե -շաքարաման -գդալ		
Եզրակացություն		
3. ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ		
-բրդուճների պատրաստում -դանակի կիրառում -աղցանների պատրաստում - գազօջախից կամ էլեկտրական սալօջախից օգտվելու կարողություն - տարբեր սննդամթերքների ճանաչողություն		
Եզրակացություն		
4. ԼՎԱՑՔ ԵՎ ԼՎԱՑՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ		
-լվացարանից օգտվելու կարողություն -ծորակից օգտվելու		

կարողություն -լվացքի միջոցներ -լվացքի մեքենա -հագուստ, գունավոր կտորներ		
Եզրակացություն		
5. ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄ		
-խոզանակներ, գոգաթիակ, -հատակմաքրիչ (հատակի մոպ, швабра), -փոշեկուլ, -անջատիչներ,վարդակներ, -դույլ, -մաքրման կտորներ, -լվացքի հեղուկներ		
Եզրակացություն		
6. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ		
-նպարեղեն (հաց, հատիկեղեն), -մսամթերք (երշիկ, նրբերշիկ), -ձու, -կաթ և կաթնամթերք		

(պանիր, կաթնաշոռ, մածուն), -բանջարեղեն, -խմիչքներ		
Եզրակացություն		
7. ՄԹԵՐՔՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ		
-պահածոյացված տարաներ, -փաթեթներ, -արկղեր, -շշեր, -սառեցված մթերքներ, -մածուկներ		
Եզրակացություն		
8. ԳՈՒՄԱՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄ (ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ)		
-թղթադրամի և մետաղադրամի ճանաչում, -ապրանքի գնի առումով կողմնորոշում, -անհրաժեշտ ապրանքի ընտրություն, -վճարում և մանրադրամի ընդունում		
Եզրակացություն		

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
1. ՀԵՌԱԽՈՍԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ		
-հեռախոսազանգը հնչելու դեպքում կատարվող գործողություններ, -հեռախոսով ինքնուրույն խոսելու կարողություն, -առաջին օգնության հեռախոսահամարների իմացություն		
Եզրակացություն		
2. ՀԵՏԻՈՏՆԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ		
-հետիոտնային անցման տեղի ճանաչում, -լուսացույցի ազդանշանների ճանաչում -փողոցում անվտանգության կանոնների իմացություն		
Եզրակացություն		
3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ		
-Կանգառների տեղի իմացություն, -հասարակական		

տրանսպորտի համարն ընթերցելու և ճանաչելու կարողություն, -կանգառում նպատակային սպասում -ուղեվարձի վճարում, -երթուղու վերջնակետի իմացություն, -հասարակական տրանսպորտում վարքի կանոնների պահպանում		
Եզրակացություն		

Գնահատումը կատարվում է ըստ հետևյալ ցուցանիշների.

- Եթե գործունեությունը ձևավորված է, նշվում է՝ **«Այո»:**
- Եթե գործունեությունն իրականացվում է մեծահասակի աջակցությամբ, նշվում է՝ **«Օգնությամբ»**:
- Եթե գործունեությունն իրականացվում է մասամբ, անգամ մեծահասակի աջակցության դեպքում, ապա նշվում է՝ **«Մասամբ»**:
- Եթե գործողության կատարումը դեռ ձևավորված չէ, ապա նշվում է՝ **«Ոչ»**:

Թադևոսյան Է.Ռ., Ազատյան Թ.Յու.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ մանկավարժների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43